ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

ՀՐԱՄԱՆ № 27-Ա

«25» 05 2026 թ. ք. Երևան

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԴՐԱՆՔ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ, ԸՆԹԱՑՔԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՈՒ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ, ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ, ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՆԳՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության և դրան նախորդող օրվա ընթացքում, ինչպես նաև ընտրություններից հետո ընտրական գործընթացին վերաբերող առերևույթ հանցանքների (ՀՀ քրեական օրենսգրքի 210-224.1-ին և 231-237-րդ հոդվածներ) մասին դիմումները, բողոքները, հաղորդումները, ինչպես նաև ԶԼՄ-ներով կամ սոցիալական ցանցերով հրապարակումները և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերը (այսուհետ՝ ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումներ) գրանցելու, հաշվառելու,

ուսումնասիրելու, ստուգելու, ըստ ենթակայության ուղարկելու, ինչպես նաև դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթների նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների հաշվառման, տարածքային և քննչական ենթակայությամբ ուղարկելու, ինչպես նաև ընթացքը լուծելու հարցում ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խմբի ու դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների միջև աշխատանքի կազմակերպման վերաբերյալ ուղեցույցը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության և ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ աշխատանքները համակարգող դատախազների ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:

3. Հաստատել ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների ընթացքի մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:

4. Աշխատանքային խմբի անդամ Լ. Գրիգորյանին՝

ՀՀ գլխավոր դատախազի՝ 2026 թվականի մայիսի 22-ի N 26-Լ հրամանով և սույն հրամանի Հավելված 1-ով սահմանված լիազորություններն իրականացնել ՀՀ քննչական կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված առերևույթ հանցանքների առնչությամբ ստացված հաղորդումների մասով, բացառությամբ սույն հավելվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերի:

5. Աշխատանքային խմբի անդամ Գ.Էլիզբարյանին՝

ՀՀ գլխավոր դատախազի՝ 2026 թվականի մայիսի 22-ի N 26-Լ հրամանով և սույն հրամանի Հավելված 1-ով սահմանված լիազորություններն իրականացնել ՀՀ քննչական

կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված առերևույթ հանցանքների առնչությամբ ստացված հաղորդումների մասով, որոնք վերաբերում են զինված ուժերում և այլ զորքերում կատարված հանցանքներին կամ կատարվել են զինծառայողների կողմից:

6. Աշխատանքային խմբի անդամ Ա. Փանոսյանին՝

ՀՀ գլխավոր դատախազի՝ 2026 թվականի մայիսի 22-ի N 26-Լ հրամանով և սույն հրամանի Հավելված 1-ով սահմանված լիազորություններն իրականացնել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված առերևույթ հանցանքների առնչությամբ ստացված հաղորդումների մասով:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ գլխավոր դատախազի 2026 թվականի
մայիսի « »-ի N հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների հաշվառման, դրանք տարածքային և քննչական ենթակայությամբ ուղարկելու, ինչպես նաև ընթացքը լուծելու հարցում ՀՀ գլխավոր դատախազության աշխատանքային խմբի ու դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների միջև աշխատանքի կազմակերպման վերաբերյալ

1. Ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումները և դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված տարածքային ու քննչական ենթակայության կանոններին համապատասխան՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և ՀՀ քննչական կոմիտե, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանություն (այսուհետ նաև՝ ոստիկանություն) ուղարկելն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խումբը՝ դատախազության ստորաբաժանումների միջոցով:

2. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության և դրան նախորդող օրվա ընթացքում ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների մասին հաղորդումները մուտքագրվում են «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և **մակագրության ուղարկվում աշխատանքային խմբի ղեկավարին:**

3. Աշխատանքային խմբում ուսումնասիրվելուց հետո այն հաղորդումները, որոնք տարածքային կամ քննչական ենթակայությամբ պետք է ուղարկվեն դատախազության տարածքային մարմիններ կամ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, աշխատանքային խմբի ղեկավարի կամ նրա հանձնարարությամբ՝ համապատասխանաբար Լ.Գրիգորյանի, Գ.Էլիզբարյանի կամ Ա.Փանոսյանի կողմից մակագրվում են աշխատանքային խմբի համապատասխան անդամին՝ տեղեկացնելով նաև աշխատանքային խմբի համապատասխան քարտուղարին, ով հաղորդման վրա դնում է «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» դրոշմակնիքը և իրականացնում հաղորդումների հաշվառում:

Այն դեպքում, երբ ներկայացված հաղորդումը պատշաճ չէ, այսինքն՝ դրանով չի փաստվում այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին

համապատասխանելու նախնական իրավական գնահատական և չի բովանդակում նույնիսկ ստուգման ենթակա տվյալներ կամ բացահայտված չէ անձի առնչությունը հանցանքին կամ նրա իրազեկության աղբյուրը, ներկայացված դիմումը, բողոքը, հաղորդումը քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար չի վերահասցեագրվում իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ այդ մասին գրավոր պարզաբանելով հաղորդում ներկայացնողին:

4. Աշխատանքային խմբի անդամը, սույն ուղեցույցի 3-րդ կետով սահմանված կարգով ստանալով հաղորդումը, «Հանձնարարել կատարել ստուգողական գործողություններ», «Հանձնարարել ստուգել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով», «Քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով վերահասցեագրել իրավասու քննչական մարմնի ղեկավարին» կամ այլ կոնկրետ հանձնարարությամբ, Լ. Գրիգորյանի կամ Գ.Էլիզբարյանի անունից նախապատրաստում է գրություն՝ հասցեագրված համապատասխանաբար դատախազության կոնկրետ տարածքային ստորաբաժանման ղեկավարին (Երևան քաղաքի վարչական շրջանների դեպքում՝ պատճենը Երևան քաղաքի դատախազին):

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումներն ուղարկվում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգելու, քրեական վարույթ նախաձեռնելու կամ այլ կոնկրետ հանձնարարությամբ կամ ուղարկվում են ոստիկանություն՝ ստուգողական գործողություններ կատարելու նպատակով:

Աշխատանքային խմբի ղեկավարի հանձնարարությամբ, ստուգողական գործողություններ կատարելու կամ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգելու նպատակով, հաղորդումը աշխատանքային խմբի համապատասխան անդամի կողմից կարող է ուղարկվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն:

5. Աշխատանքային խմբի անդամը դատախազության համապատասխան տարածքային ստորաբաժանում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե կամ ոստիկանություն հասցեագրված գրության և կից հաղորդումների թղթային տարբերակը, առկայության դեպքում նաև էլեկտրոնային կրիչները հանձնում է աշխատանքային խմբի համապատասխան քարտուղարին, վերջինս էլ իր հերթին ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետին՝ սահմանված կարգով հասցեատիրոջն առաքելու նպատակով:

6. Աշխատանքային խմբի անդամը յուրաքանչյուր հաղորդման վերաբերյալ տեղեկատվությունը՝ «Հաղորդման բովանդակություն», «Աղբյուր», «Գործողություն» և «Ընթացք» ձևաչափով ներմուծում է համապատասխան տեղեկանքում (տեղեկանքի ձևը տե՛ս Հավելված 3-ում), իսկ տեղեկանքն անմիջապես ուղարկում է Լ. Գրիգորյանին (ՀՀ քննչական կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված գործերով, բացառությամբ ՀՀ զինվորական դատախազության իրավասության ոլորտի), Գ.Էլիզբարյանին (ՀՀ զինվորական

դատախազության իրավասությանը վերաբերելի մասով), կամ Ա. Փանոսյանին (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական ենթակայությանը վերապահված գործերով):

<u>Սույն հավելվածի 4-6-րդ կետերով նախատեսված գործողությունները կատարվում են աշխատանքային խմբին հանձնված յուրաքանչյուր հաղորդման կապակցությամբ:</u>

7. Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դատախազության, քննչական կոմիտեի կամ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանում կամ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ընտրության և դրան նախորդող օրվա ընթացքում ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների մասին հաղորդում ներկայացնելու դեպքում, համապատասխանաբար դատախազության տարածքային տվյալ ստորաբաժանման ղեկավարը կամ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետն այդ մասին սույն հրամանի Հավելված 3-ով սահմանված տեղեկանքի ձևով տեղեկացնում է աշխատանքային խմբի ղեկավարին, ով այն ուղարկում է Լ.Գրիգորյանին, Գ.Էլիզբարյանին կամ Ա.Փանոսյանին՝ միասնական հաշվառում կատարելու նպատակով:

8. Հաղորդումները ստուգողական գործողություններ կատարելու կամ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգելու նպատակով իրավասու մարմիններին ուղարկելիս գործում են հետևյալ կանոնները.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 210-224.1-ին և 231-237-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցանքների փաստերի վերաբերյալ ստացված հաղորդումներով ստուգողական գործողությունները կատարում է ոստիկանության համապատասխան տարածքային բաժինը:

2) ՀՀ քրեական օրենսգրքի 218-221.1-ին և 231-232-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցանքների փաստերի վերաբերյալ ստացված դիմումները, բողոքները և հաղորդումները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգվում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավասու ստորաբաժանման կողմից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 210-217-րդ, 222-224.1-ին և 233-237-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցանքների փաստերի վերաբերյալ ստացված հաղորդումները՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 210-217-րդ, 222-224.1-ին և 233-237-րդ հոդվածներով նախատեսված առերևույթ հանցանքների փաստերի վերաբերյալ ստացված յուրաքանչյուր հաղորդման վերաբերյալ կազմված փաստաթղթերը՝ եզրակացություն, քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու մասին գրություն, մեկ աշխատանքային օրվա ընթացքում դատախազության տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից ուղարկվում են **աշխատանքային խմբի ղեկավարին:**

10. Սույն ուղեցույցի 4-րդ կետը կիրառելիս անհրաժեշտ է նկատի ունենալ.

1) Եթե ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումը պարունակում է վերացական, ընդհանուր և անորոշ տեղեկատվություն, դրանում բացակայում են նույնականացման համար անհրաժեշտ տեղեկություններ, մասնավորապես

անձանց շրջանակ կամ հանցագործության վայր կամ տեղամասային կենտրոնի համար, տեսագրություն, ձայնագրություն և այլն, ապա բոլոր նման հաղորդումները դատախազության տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից ուղարկվում են ոստիկանության համապատասխան տարածքային բաժիններ՝ դրանցով ստուգողական գործողություններ կատարելու նպատակով:

Այդպիսի պարտադիր գործողություններից են՝

- հրապարակման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում տեղեկատվությունը հրապարակած ՁԼՄ-ին.

- եթե տեղեկատվությունը սոցիալական ցանցերում կամ այլ համացանցային կայքերում հրապարակել է ֆիզիկական անձը, ապա անձը հայտնի լինելու դեպքում վերջինիս հրավիրել ոստիկանության համապատասխան բաժին և հարցման ենթարկել հրապարակման մեջ նշված հանգամանքների վերաբերյալ.

- եթե հրապարակման մեջ նշված է անձանց որոշակի շրջանակ, ովքեր ականատես են եղել իրավախախտմանը կամ ունեն դրա վերաբերյալ տեղեկատվություն, հարցման ենթարկել այդ անձանց.

- կատարել յուրաքանչյուր հրապարակման բովանդակությունից բխող այլ ստուգողական գործողություններ:

Նշված գործողությունների կատարման արդյունքում հաղորդման մեջ նշված հանգամանքները չհիմնավորվելու կամ դրանց վերաբերյալ՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով քննչական մարմին վերահասցեագրելու համար անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն ձեռք չբերելու դեպքում հաղորդումը եզրակացությամբ կցվում է կարգագրին:

2) Եթե հաղորդումն ի սկզբանե բովանդակում է հանցագործության վերաբերյալ բավարար տեղեկատվություն՝ ***կոնկրետ անձանց շրջանակ, հանցագործության վայր, ժամ, տեղամասային կենտրոնի համար, իրավախախտի անուն, ազգանուն, կարգավիճակ, տեսագրություն, ձայնագրություն և այլն,*** կամ այդպիսիք ձեռք են բերվել հաղորդման հիման վրա ձեռնարկված ստուգողական գործողությունների արդյունքում, ապա հաղորդումը քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով անհապաղ վերահասցեագրվում է իրավասու քննչական մարմին:

3) Քրեական վարույթ նախաձեռնելուց հետո նախաքննության շրջանակներում անհրաժեշտ է ապահովել ամբողջ ծավալով գործի հանգամանքներից բխող ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարումը: Մասնավորապես՝

- հարցաքննել հանձնաժողովի անդամներին, վստահված անձանց, դիտորդներին, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրված, ընտրության և քվեարկության ընթացքը լուսաբանող ՁԼՄ-ների ներկայացուցիչներին, առերևույթ և ընտրական բնույթի հանցագործությանն ականատես ընտրողներին.

- զննել ընտրական փաստաթղթերը (ընտրողների ցուցակներ, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյան և այլն) և այլ պարագաները, անհրաժեշտության դեպքում առգրավել դրանք.

- նախաքննության շրջանակներում անձին դատավարական կարգավիճակ տալու, նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցերը քննարկել աշխատանքային խմբի անդամ, համապատասխան տարածքի պատասխանատու դատախազի հետ:

Քվեարկության օրը ընտրական հանձնաժողովի անդամների հետ ապացուցողական և վարութային այլ գործողություններ կատարել կամ ընտրական փաստաթղթերը և այլ պարագաները զննել բացառապես անհետաձգելի դեպքերում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ գլխավոր դատախազի 2026 թվականի
մայիսի « »-ի N հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության և ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ աշխատանքները համակարգող դատախազների

1. Արսեն Վարդանյան, Շիրակ Խաչատրյան – Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններ,
2. Շուշանիկ Իսրայելյան – Տավուշի և Գեղարքունիքի մարզերի դատախազություններ,
3. Մամիկոն Մարտիրոսյան – Արագածոտնի և Վայոց ձորի մարզերի դատախազություններ,
4. Տիգրան Մուրադյան – Շիրակի և Սյունիքի մարզերի դատախազություններ,
5. Հրանտ Ներսիսյան – Արարատի և Լոռու մարզերի դատախազություններ,
6. Անդրանիկ Շահբազյան – Արմավիրի և Կոտայքի մարզերի դատախազություններ,
7. Կարեն Հարությունյան – ՀՀ զինվորական դատախազություն,
8. Աշխատանքային խմբի անդամ, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալներ, ավագ դատախազներ և դատախազներ – ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե,
9. Սերգեյ Առաքելյան – ՀՀ ՆԳՆ ոստիկանություն,
10. Միհր Մկրտչյան - ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀՀ գլխավոր դատախազի 2026 թվականի
մայիսի « »-ի N հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

Ընտրական գործընթացին խոչընդոտող առերևույթ հանցանքների վերաբերյալ հաղորդումների ընթացքի մասին

Հ/Հ	Հրապարակման, հաղորդման կամ ահազանգի բովանդակությունը	Աղբյուրը	Գործողությունը	Ընթացքը